Ջավախքյան ձմռան դժվարություններն ու առանձնահատկությունները

Գարնան գալուն դեռ վաղ է: Այստեղ հաճախ կլսեք՝ հետևյալ արտահայտությունը «Մի քանի օր կտաքանա, հետո կցրտի, առջևում ունենք «գիժ մարտը» ու ցուրտը կշարունակվի մինչև մայիսի սկիզբ:

Ձմռանը, որքան որ գեղեցիկ է Ջավախքը, այնքան դաժան է ու անտանելի՝ ցրտահարությամբ, ձյունով ու բուքով: Սառնամանիքները այս տարացքում շարունակվում են ւ ամսվա ընթացքում: Հունվար-փետրվարին ջերմաստիճանը երբեմն իջնում է -25-28 աստիճան: Տարածաշրջանի խիստ կլիմայական պայմանների պատճառով տեղացիները ամռան առաջին ամիսներից սկսում են մտածել ջեռուցման մասին: Ջեռուցման հիմնական միջոցը վառարանն է, այսպես կոչված «փեչ»: Ջավախքի այն գյուղերում, որտեղ հանրակրթական դպրոցներն ու մանկապարտեզները գազաֆիկացված չեն, ջեռուցման համար օգտագործվում են փայտի վառարաններ:

Փետրվարը շատ կարևոր ամիս է տեղի բնակիչների համար: Ամսվա կեսից ինքնազբաղված ֆերմերները սկսում են հաշվել ապրանքների պարենային պաշարը. Նրանք հաշվում են մնացյալ խոտի պաշարը մինչև ապրիլի վերջ կբավականացնի: Այդ ժամանակ հաճախ կլսեք ընտանի կենդանիների պահպանման և խոտերի գնի մասին խոսակցություն: Մեկ տուկի գինը ներկայումս տատանվում է 12-14 լարիի սահմաններում, ինչը բավականին թանկ է: Անցյալ տարի դրա գինը 7-8 լարի էր: Չոր խոտն օգտագործում են անասուններին կերակրելու համար, երբեմն տեղացիները անասուններ են վաճառում անբավարար խոտի պահուստ չունենալու պատճառով: Նման պայմաններում ընտանեկան տնտեսությունները անասնաբուծությունը դիտարկում են որպես ոչ շահութաբեր բիզնես: Բացի սննդամթերքի թանկությունից, էական մարտահրավեր է հողի սակավությունը, կաթի ցածր գինը և ինքնազբաղվածներին նկատմամբ պետական աջակցության բացակայությունը: Այս ամենին գումարվում է երկար ու խիստ ձմեռը:

Գյուղատնտեսության նախարարությունը մշտապես նշում է, որ գյուղատնտեսության զարգացումը երկրի առաջնահերթություններից մեկն է: Նշենք, որ անասնաբուծության ոլորտը փրկելու առաջին խնդիրը հողերի պակասն է: Բայց պետությունը տնտեսություններում ինքնազբաղվածների խնդիրները չի տեսնում: Գյուղատնտեսության կողմից հայտարարված ծրագրերին մասնակցում են խոշոր ֆերմերները: Ինքնազբաղված ֆերմերը սահմանափակ ժամանակի և ֆինանսների պատճառով չի կարողանում մասնակցել: Նույն խնդիրը հողատարածքների մասով է, խոշոր ֆերմերը 10,20 կամ 100 հեկտար ունի, ինքնազբաղ ֆերմերը՝ 1 հա հողատարածք: Նման իրավիճակում անհնար է ակնկալել գյուղատնտեսության զարգանալը: Նինոծմինդայում գյուղացիները հիմնականում կարտոֆիլագործությամբ են զբաղվում և ստացաց բերքի վաճառում տեղում: Պանիրը և այլ կաթնամթերքը պատրաստվում են փոքր տնային տնտեսություններում և փոխանակում Վրաստանի այլ շրջաններից ժամանած առևտրականներին: Փետրվարի վերջին կարտոֆիլագործությամբ զբաղվողները կսկսեն վաճառել աշնանը պահեստավորված կարտոֆիլը: Այստեղ բոլորն աշխատում են հողի վրա, այլ ճանապարհ չկա:

Նինոծմինդայում ցրտահարության պատճառով լճերը սառում են, փետրվարին արևային եղանակը հազվադեպ է: Այս սեզոնին Ջավախքում ոչ մի առանձնահատուկ բան չեք տեսնի, բացի սպիտակած դաշտերից ու սառած լճերից: Սպիտակ և մուգ կապույտ գույներն այնքան են խառնված իրար, որ չես կարող ասել, թե որտեղ է ավարտվում դաշտը և որտեղ է սկսվում երկինքը:

Նինոծմինդայում տները կառուցված են խոշոր աղյուսե քարերից: Տեղացիներն այս նյութն անվանում են հայկական տուֆ: Տուֆ քարը հիմնականում երկու գույնի է՝ սև և վարդագույն: Նման քարից կառուցված տները լավ են պաշտպանում ցրտահարությունից: Գյուղերի մեծ մասը կտրված է վարչական կենտրոնից: Հիմնականում երկու պատճառով՝ տրանսպորտի բացակայություն և կիսավեր ճանապարհներ: Վերջին տարիներին Նինոծմինդայում նկատվում է գյուղական ճանապարհների կառուցման ակտիվ գործընթաց, սակայն աշխատանքներն այնքան անփույտ են, որ երկու տարին մեկ պետք է նորից վերանորոգվի: Շատ վայրեր դժվար հասնելի է: Սա հիանալի հնարաորություն է առևտրականների համար: Հեռավոր գյուղեր են բերում ամեն տեսակ ապրանքներ, ավելի հաճախ՝ միրգ ու բանջարեղեն: Տեղացիները գնորդների բերած սնունդը փոխարինում են կարտոֆիլով ու պանրով: Պանիրն ու կարտոֆիլը մեր երկրորդ հարստություն են: Մեզ մոտ պանիրը փողի դեր է կատարում և ամենօրյա շրջանառության մեջ է:

Տեղացիների հետ զրուցելիս տարեց տղամարդկանցից մեկն ինձ հարցնում է, թե ինչու չեն ցույց տալիս Նինոծմինդայի կամ Ախալքալաքի եղանակի տեսությունը: Հարցին համոզիչ պատասխան չունեի: Եղանակի կանխատեսումը հասկանալու համար տարեցները միշտ դիմում են երիտասարդներին, քանի որ ոչ բոլորը գիտեն ինտերնետից օգտվել: Հաճախ համեմատում են սահմանամերձ Աշոցքի եղանակի կանխատեսման հետ, քանի որ լեզվական արգելքի պատճառով դիտում են միայն հայկական ալիքները:

Եղանակը նինոծմինդացիների համար շատ կարևոր է հատկապես ձմռանը: Տեղացիներն արդեն սովոր են դրան և կարողանում են կանխատեսումներ անել նույնիսկ քամու ուղղությամբ: Նրանց դիտարկումների համաձայն՝ լինում են հիմնականում երկու ուղության քամիներ՝ Ախալքալաքի և Քյորօղլիի (տեղացիներն անվանում են փոքր Աբուլ սարի Քյորօղլու սար, Աբուլի բերդին Քյորօղլիի բերդ): Նաև եթե դրսում ձմռանը համեմատաբար տաք է, օդը պարզ է, երկինքը ամպամած է, ապա սպասվում է ձյուն:

Լեռնային շրջաններում, որտեղ ազգային փոքրամասնությունները կոմպակտ են ապրում, անհրաժեշտ է իրականացնել տարբեր պետական ծրագրեր, որպեսզի մարդիկ իրենց անմասն չզգան:

Ջավախեթիում կլիման դաժան է, կենսապայմաններն էլ ավելի բարդ են: